ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 113 - Ա
04 հուլիսի 2013 թ

ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Վաղաշեն համայնքի ղեկավարին՝

1) Հաշվապահական հաշվառումը իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
2) Ապահովել«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ և 69-րդ հոդվածների պահանջների կատարումը:
3) Շինարարության թույլտվություն տրամադրել բացառապես ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան:
4) Համայնքին հանձնված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը արդյունավետ օգտագործելու համար սահմանված կարգով տալ վարձակալության հայտարարություն:
5) Համայնքի վարչական տահմաններում ընդգրկված համայնքային և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի օգտագործումը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ-ի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման պահանջներին:
6) Հաստատել ներհամայնքային առևտրի կանոնները և ուղարկել պետական փորձաքննության:

7) Առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողությունն իրականացնել "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17[1] հոդվածի պահանջներին համապատասխան:
8) Համայնքի ղեկավարի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ մարզպետարան ներկայացնել հաշվետվություն "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17 հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան:
9) Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով համայնքի ավագանու հերթական նիստերը հրավիրել ոչ ուշ քան երկու ամիսը մեկ:
10) Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1[1] կետի դրույթներով գյուղապետի կողմից ընդունվող իրավական անհատական ակտերը երկօրյա ժամկետում տրամադրել ավագանու անդամներին և փակցնել բնակչության համար տեսանելի վայրում:
11) Համայնքի ավագանու և գյուղապետի կողմից ընդունվող իրավական ակտերը /որոշումներ, կարգադրություններ/ իրենց վերնագրերով, ներածական մասով, կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով և ուժի մեջ մտնելու ժամկետներով համապատասխանեցնել ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, 40-րդ, 41-րդ հոդվածների պահանջներին:
12) Հաստատել և գործողության մեջ դնել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը:
13) Վարել համայնքի ղեկավարի, ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի 2010-2012թթ. հաշվառման մատյանները:

2. Սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ա/թ հուլիսի 31-ը:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 112 - Ա
04 հուլիսի 2013 թ

ՄԱՐԶԻ ՄԱՔԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Մաքենիս համայնքի ղեկավարին՝

1) Հաշվապահական հաշվառումը և դրամարկղային գործառնությունները իրականացնել է «Դրամարկղայի գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
2) Ապահովել«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ և 34-րդ հոդվածների պահանջների կատարումը:
3) Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով, ձեռնարկել համապատասխան միջոցներ և սահմանված կարգով համայնքի բյուջեյում նախատեսել համապատասխան գումար համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագիծը մշակելու համար:
4) Առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողություն իրականացնել ,,Առևտրի և ծառայությունների մասին,, ՀՀ օրենքի 17 հոդվածի 1-ին կետերի պահանջներին համապատասխան:
5) Առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ պարբերաբար մարզպետարան ներկայացնել հաշվետվություն ,,Առևտրի և ծառայությունների մասին,, ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան:
6) Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1^1 կետի պահանջով 2 օրյա ժամկետում

ավագանու անդամներին տրամադրել գյուղապետի կողմից ընդունվող իրավական ակտերի պատճենները:

7) Համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը:
8) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը իրենց վերնագրերով, կառուցվածքներով և իրավական տեխնիկայի կանոններով համապատասխանեցնել ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37, 40, 41-րդ հոդվածների պահանջներին:
9) Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով պետական իրավական փորձաքննություն և պետական գրանցման ներկայացնել ընդունվող նորմատիվ իրավական ակտերը /ավագանու կանոնակարգը, համայնքի բյուջեն, տեղական տուրքերի դրույքաչափերը, համայնքի զարգացման ծրագիրը և այլն/:
10) Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2[1] կետի դրույթներով հաստատել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը:
11) Վարել համայնքի ղեկավարի, ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի 2010-2012թթ. հաշվառման մատյանները:

2. Սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 31-ը:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ